Մեծերի կարծիքը Շիրվանզադեի մասին

Ստեփան Զորյան

Բնությունը Շիրվանզադեին բացառիկ գեղեցկության հետ միասին օժտել էր և բացառիկ կենսասեր ոգով: Ու նրան նայելիս թվում էր, իսկապես, թե այդ գեղեցկության տեր տղամարդն ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, քան կենսասեր: Եվ առաջին բանն իրոք որ աչքի էր ընկնում մեծ վիպասանի բնավորության մեջ՝ դա նրա կենսասիրությունն էր, բուռն, անհագ կենսասիրությունը, որով մեծապես տոգորված են և նրա երկերը: Կյանքով լեցուն՝ նա սիրում էր կյանքն իր ամբողջությամբ, իր բոլոր արտահայտությունների մեջ:

Մաքսիմ Գորկի

Դուք գրող եք, մարդ, որ ապրում է աշխարհի բոլոր ցավերով և ուրախություններով: Դուք ինքներդ գիտեք՝ որքան ուրախալի է իմանալ, որ Ձեր խոսքը հասկանալի է Կովկասում և Անգլիայում, Սկանդինավյան թերակղզում և Իտալիայում:



Երվանդ Օտյան

Շիրվանզադեն հայ գրականության մեջ ամենեն գեղեցիկ և հաստատուն սյուներեն մինն է:

Գրիգոր Զոհրապ

Շիրվանզադեի «Պատվի համարին» մեջ ժամանակակից պուրժուազին բոլոր թիպերը լիաբուռն սփռած է: Բիեսին կազմվածը իր պարզությանը մեջ հոյակապ է և հյուսիսի գրականության հորինվածը կհիշեցնե: Ռուսահայ թատերագետը շատ բարձր է Օքթավ Միրպոեն, որ, սակայն, Ֆրանսիայի փառքերեն մեկն է:

...Իսկ խոսակցությունը, դիալոգը, որ որևէ թատերական բիեսի հաջողության առաջի պայմանն է, երբեք այսքան ժողովրդական պարզությամբ և խիզախությամբ չէր փայլած, որքան այս բիեսին մեջ:

Հովհաննես Թումանյան

Հայ ժողովուրդը, եթե մարդիկ ունի, որոնց պետք է հարգի հոբելյանով, դրանցից մեկը Շիրվանզադեն է: «Ցավագարի», «Քաոսի», «Արտիստի» և շատ ուրիշ վիպական ու բեմական գրվածքների հեղինակը հանդիսանում է անվիճելի արժանավոր հոբելյար:



Վահան Տերյան

Կենցաղագրական և հոգեբանական դրամայի գրական լեզվով՝ ամենից շատ զարկ է տվել Շիրվանզադեն, և նրա նշանակությունը այդ ասպարեզում մեծ է ու նշանակալից:



Դերենիկ Դեմիրճյան

Շիրվանզադեն հանդիսացավ այն առաջին մեծ գրողը, որ ոչ միայն չշփոթվեց, այլև մտքով հասու եղավ նոր պատմության փոթորկալի իրադարձություններին, նրա մեծ իմաստին, նրա մեծ անհրաժեշտության:

Ստեփան Զորյան

Շիրվանզադեն, իրոք, որպես ստեղծագործող մեծություն, պատկանում է ոչ միայն Հայաստանին, այլև ամբողջ Անդրկովկասին, որովհետև նա իր երկերում, ավելի շատ, քան որևէ այլ գրող, արտացոլել է Անդրկովկասի ժողովուրդների կյանքն ու հարաբերությունը:

Տիգրան Կամսարյան

Զորեղ վիպասան և ազնվազգի թատերագիր մըն է Շիրվանզադեն, որուն գործը մին է հայ գրականության ամենեն հարուստ կոթողներեն:

Արշակ Չոպանյան

Ահա գրագետ մը, որ իր գործին ընդարձակությամբն ու փոկունությամբը, իր հղանցմանց ու արտահայտության զորությամբն ու կենդանությամբը, գրականության դերին և իսկության մասին իր ունեցած բարձր ու անկախ ըմբռնումովը լիովին արժանի է «վարպետ» պատվանունին: